ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 07/19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 12 հուլիսի 2019թ.

2019 թվականի հուլիսի 12-ին, ժամը 14:00-ին, Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում՝ Բյուրեղավանի համայնքապետարանի թիվ 1 վարչական շենքում, տեղի ունեցավ համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման նպատակով ստեղծված ֆինանսական, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստ՝ «Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման Ծրագրին» մասնակցության հայտը հաստատելու մասին որոշման նախագծի թեմայով:

Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի նախագահ Արման Օհանյանը, անդամներ Արման Խանզադյանը, Արտյոմ Ավագյանը, համայնքի ղեկավարի խորհրդական, զարգացման հարցերով պատասխանատու Սարգիս Ղազարյանը, Հանձնաժողովի աշխատանքներին աջակցող, համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Զարուհի Ապրեսյանը:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց նիստի օրակարգը՝

1. «Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման Ծրագրին» մասնակցության հայտը հաստատելու մասին:

Համայքնի ավագանու որոշման նախագծի քննարկում:

Սարգիս Ղազարյանը ներկայացրեց, որ հիմք ընդունելով Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի կողմից իրականացվող «Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման Ծրագիրը»՝ անհրաժեշտություն է առաջացել հաստատել Բյուրեղավան համայնքի մասնակցության հայտը ծրագրին: Ծրագրի նպատակն է Հայաստանի տարածքային համաչափ զարգացումը, խոշորացված համայնքներում առաջացած հիմնախնդիրների լուծումը:

Ծրագրի իրականացմամբ Բյուրեղավան խոշորացված համայնքում ոռոգման համակարգի կառուցման և վերանորոգման արդյունքում համայնքի բնակիչները կունենան գյուղատնտեսական արտադրանքն ավելացնելու լրացուցիչ հնարավարություն, կավելանան համայնքի կանաչ տարածքները, կավելանան պտղատու այգիներ հիմնելու հնարավորությունները, կպակասեն ոռոգման ջրի կորուստները, ինչը կնպաստի հողերի արդյունավետ օգտագործմանը և գյուղատնտեսության զարգացմանը:

Կոտայք կանալից համայնքի բնակավայրերը և ոռոգվող ցանքատարածքները մատակարարող ջրագծերը կամ մաշված են, կամ չեն գործում: Բնակավայրերի ներքին ցանցերը նույնպես մաշված են,

իսկ Զրաբերում պոմպակայանը բավարար քանակի ջուր չի մղում բնակավայր: Անհրաժեշտ է նոր ջրագծերի կառուցում, բնակավայրերի ներքին ցանցերի հիմնանորոգում: Նախատեսվում է Զրաբեր բնակավայրում ձեռք բերել 50լ/վ հզորությամբ երկու պոմպ և վերանորոգել պոմպակայանը, ինչը կարժենա մոտ 25 մլն դրամ: Համայնքի ոռոգման համակարգի կառուցումը, ներքին ցանցերի արդիականացումը նպատակ ունի արդյունավետ օգտագործել ջրային ռեսուրսները, նպաստել գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածքների ավելացմանը, նոր պտղատու այգիների տնկմանը, համայնքի կանաչ տարածքների պահպանմանը և ավելացմանը, ինչպես նաև դրական ազդեցություն կունենա շրջակա միջավայրի պահպանության վրա:

Ծրագրի իրականացումը տնտեսական առումով լրացուցիչ եկամուտ կապահովի համայնքի բնակավայրերի բնակիչներին: Նրանք կվճարեն իրականում իրենց կողմից օգտագործված ջրի դիմաց, կունենան ավելի շատ բերք, ուստի և ավելի շատ եկամուտներ:

Ծրագրի իրագործումը կնպաստի համայնքի համաչափ զարգացմանը, ներհամայնքային կյանքի աշխուժացմանը և բնակչության կենսամակարդակի բարձացմանը: Կստեղծվեն խթաններ գյուղացիական տնտեսությունների զարգացման համար, կավելանան պտղատու այգիները, կավելանան համայնքի կանաչապատ տարածքները, համայնքն ավելի գրավիչ կդառնա ներդրողների համար:

Ծրագրի իրագործման ընթացքում և արդյունքում կստեղծվեն նոր աշխատատեղեր:

Որոշվեց՝

հավանություն տալ «Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման Ծրագրին» մասնակցության հայտը հաստատելու մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Նիստն ավարտվեց:

Հանձնաժողովի նախագահ՝ Արման Օհանյան

Հանձնաժողովի անդամներ՝ Արման Խանզադյան

Արտյոմ Ավագյան